

334/1

~~0162-2710-1~~

2304-10

401
2-61

ԳՐ. ՂԱՓԱՆՑԵԱՆ

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆԵՐ

— Ե Ի —

Լ Ե Ձ Ո Ի



Վ. Ա. Ղ. Ա. Բ. Շ. Ա. Պ. Ա. Տ.

Էլեկտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի
1914

401
2-50

ար

ԳՐ. ՂԱՓԱՆՑԵԱՆ

ՏՐՈՍ ՈՍԼ Բ 1
2-11
4
2սի

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆԵՐ


✠ Ե Ի ✠

426

Լ Ե Զ Ո Ւ

1007
34139

4



Վ Ա Ղ Ա Շ Ա Պ Ա Տ

Էլեկտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի
1914

Արտատպուած թիւն «Արարատ» ամսագրի 1914 թ. № 9-ից:

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆԵՐ ԵՒ ԼԵԶՈՒ

Լեզուաբանական գիտցիւթիւններ ասելով մենք հասկանում ենք «ներածութիւն ի լեզուաբանութիւն» (կամ «լեզուաբանութեան ներածութիւն»), «ընդհանուր լեզուաբանութիւն» կամ «լինգուստիկա» (լեզուի գիտութիւն, наука о языках) և «պատմական լեզուաբանութիւն» ուսումները: Առաջին և երկրորդը նոր գիտութիւններ են, կարելի է ասել՝ մեր աչքի առաջ են կազմուում և հանդէս գալիս, մինչդեռ երրորդը՝ պատմական լեզուաբանութիւնը եամեմատաբար հին է և ունի իրեն որոշ սահմանները:

Լեզուաբանութեան ներածութեան նպատակն է՝ ուսումնասիրել լեզուի ընդհանուր ձևական սկզբունքները, լեզուի, այսպէս ասած, տարրերը և պարագաները, տալ լեզուային երևոյթների տեսական պատկերը, կցելով դորան նաև լեզուի այլևայլ ձևերը (resp. տեսակները), որոնք արձանագրուած են անցեալում և ներկայումս: Դորանով այդ առարկան, իրաւամբ «ներածական» կոչուելով, հոգ է պատրաստում և հիմք ծառայում լեզուի բոլոր մանրամասնութիւնները ծաւալօրէն ըմբռնելու. գործնականապէս այդ «ներածութիւնը» զարթեցնում է մեր մէջ որոշ «լինգուստական» հոտառութիւն, ստեղծում է ներգործական և քննօղական վերաբերմունք դէպի «լեզուային աշխարհի» այլևայլ երևոյթները. այդու նկատմամբ շատ տարօրինակ պէտք է թուի ոմանց կարծիքը, թէ մարդկային ուղեղը նման է թերթի, գրատախտակի, ֆոնոգրաֆի կայն, մի խօսքով մի tabula rasa է, որը կրաւորապէս է ընդունում արտաքին տպաւորութիւնները:

Երկրորդ լեզուաբանական ուսումը այդ «ընդհանուր լեզուաբանութիւն» կամ, ինչպէս ասում են, «լեզուի գիտութիւնն» է (linguistica, наука о языках), որի բովանդակապէս յայտ գալը դեռ վաղաժամ պէտք է սեպուի. դորա միակ նպատակ ու ինդիքն է՝ յենուելով լեզուի անցեալ ու ներկայ երևոյթների ուսումնասիրութեան վերայ՝ լուսարանել թէ ինչ պայմանների և օրէնքների հիման վերայ են շողկապուած այդ դիտելի երևոյթները և իրար հետևում, լինին այդ պայմանները և օրէնքները սահմանափակուած տեղով և ժամանակով. թէ գործելիս անընդհատ և ամենուրեք¹⁾:

1) Կ. А. Мейе, Введение в сравнительную грамматику индо-европейских языков, перев. проф. Кудрявского, Юрьевъ 1911, էջ 408.

Ընդհանուր լեզուաբանութիւնը չի սահմանափակուում հանրալեզուային գործօնների սոսկ պատկերացումով, ինչ որ յատուկ է «ներածութեանը», այլ ձեռնարկում է դոցա յարաբերական ուսումնասիրութեան ինչպէս և լեզուային ամեն մի գործօնի և պարագայի, որոնք յատուկ կարող են լինել մի քանի լեզուներին և մի որոշ ժամանակաշրջանում: Եթէ «ներածութիւնը» նպատակադրուում է ընտրուել հանրալեզուային ձեւերն սկզբունքները և պարագաները, անկախ տեղից և ժամանակից, և տալիս է դոցա, այսպէս ասած, ուրուագիծը, գործադրութեան տեսակէտից դիմելով (կարգացողին կամ լսողին մատչելի) այլևայլ լեզուների միջնորդութեան և ժամադակութեան, և կցելով այդ հանրալեզուային «ատուրբութեանը» նաև այն լեզուային սկզբունքների և պարագաների ընտրուումը, որոնք կախում ունեն ժամանակից և տեղից, ընդհանուր լեզուաբանութիւնը վերցնում է այն սկզբունքների և պարագաների համադրական և յարակցական դնումը, որոնք «արձանագրուած» են, յայտ են գտնուած և արտայայտուած աշխարհիս բոլոր լեզուների մէջ, թէ կենդանի և թէ մեռած, և ինչպէս իստիկայի խնդիրներ պէտք է հանդիսանան, օրինակ, այնպիսի երևոյթներ, ինչպէս՝ ա) հազագային հնչիւնների անհատանալը զանազան լեզուներում կամ թէ այդ հնչիւնների փոխարինուելը լեզուի «էտիմոլոգիանում» աւելի առաջալեզուային հնչիւններով, ի) լուսարանումն այն լեզուային երևոյթի, որը յայտնի է հայերէնում, վրացերէնում, արաբերէնում (եթէ յիշողութիւնը մեզ չի խաբում), ինչպէս՝ հաց-մաց, ջուր-մուր, ելին, զ) «ժողովրդական ստուգաբանութեան» էութիւնը այլևայլ լեզուներում²⁾, զ) սեռերի գոյացման խնդիրը և կամ դոցա չգոյանալու զրդապատճառները և հանգամանքները, զ) հոլովումների և

— գործիքի, վիճակաւոր, վիճակի և ման գրքերու պարզական

2) Այդ այն երևոյթն է, երբ ժողովուրդը, մի որ եւ է խօսք չհասկանալով, ենթարկում է դրան այնպիսի ձեւաւորման, որը հասկանալի երեւայ. օրինակ, հայերէնում «Ալադեազ» բառը որը ծագած է «Արագած» բառից, ըստ իրեն անհասկանալիութեան, ենթարկուել է իմաստաւորման, իբրև ամսկաց խօսք, իբրև «ալ աջ», համեմատիր նմանապէս ժողովրդական «Յեղարբունի» բառը եւ իսկական «Կեղարբունի» ռուսաց ОШИБКА բառը մեր գիւղերում (օր. Աշտարակում) դառել է «հաշիվկա» կապակցուելով հաշիւ բառի հետ. ուստի էնում «реверуть» դառել է «некруть», «режимъ» «рѣжемъ», «эскекаторъ»-ը «ѣккаторъ», եւն. Արաբները վերցնելով, օրինակ, յունական Alexander յատուկ անունը կամ պարսկերէնից Laskar (Լաշկար) «գորք» բառը, սկզբի al-, և հնչիւնները ընդունել են իբրև «արաբական» al-մասնիկը, ինչպէս al-koran «զուրան», al-lahu «Աստուած» եւլն, եւ երբ արգէն արաբական լեզուում

խոնարհումների տարբեր սկզբունքները լեզուների մէջ, են, ենու բոլոր լեզուային սկզբունքների յարակցական ուսումնասիրութիւնը կատարուում է, ինչպէս ասուած է, համադրաբար, վերցնելով այդ սկզբունքների տարբերակ ձևերը ամենուրեք ըստ դոցա նմանողութեան կամ հարևանցութեան (մեր ուղեղում):

«Պատմական լեզուաբանութեան» նպատակն է՝ ուսումնասիրել մի որ եւ է լեզու իրեն զարգացման շրջանում, հանդերձ ամեն մի գործող պարագայով. նման պատմական նշանակութիւն ունի, օրինակ, հնդա-եւրոպական լեզուի ուսումնասիրութիւնը իրեն արձանագրուած ձևերում (՝ սլաւոնական, կելտական, հայկական, արիական...), որի քերականութիւնը յայտնի է իբրև «համեմատական քերականութիւն հնդկա-եւրոպական լեզուներին», նմանապէս՝ սեմական լեզուի ուսումնասիրութիւնը իրեն պատմաձևերի միջնորդութեամբ. ինչպէս արաբականի, արամէականի (այսորերէնի), հերթայերէնի, ասսուրականի են. սոյն «պատմական լեզուաբանութեանն» են պատկանում ի հարկէ և մի որ եւ է հայոց բարբառի, լատիներէն լեզուի և այլոց ուսումնասիրութիւնը, երբ այդ լեզուները վերցնում են առանձնօրէն, իրենց մէջ

Արդ ուրեմն՝ «ներածութիւնը» մօտենում է մի որ եւ է լեզուային սկզբունքին կամ պարագային լոկ, այսպէս ասած, «նկարագրման» տեսակէտից. «պատմական լեզուաբանութիւնը» անտղում է դոցա յայտ գալը մի որ եւ է լեզուում, և հետևապէս մի որ եւ է լեզուի «կեանքը», զարգացումը. իսկ «ընդհանուր լեզուաբանութիւնը» նայում է այդ լեզուային սկզբունքների և պարագաների վերայ, «արտարալիտօրէն», և առանձնացնելով դրանց այլևայլ լեզուներից, ենթարկում է յարաբերական ուսումնասիրութեան. (ընդհանուր լեզուաբանութեան առարկայ պէտք է հանդիսանան նաև այն «ապալեզային» հանուր պարագաները, որոնք յարակից նշանակութիւն ունեն այդ հանրալեզուային սկզբունքների և պարագաների հանդէպ, պայմանաւորում են դոսա և այլազան երփնաւորումներ ու ձևաւորումներ պատճառում. այդ «ապալեզուային» հանուր բնոյթ կրող պարագայ-խնդիրներ կարող են լինել, օրինակ, դասակարգերի ազդեցութիւնը հնչիւնական փոփոխութիւնների և մասաւանդ բառի իմաստի վերայ, ինչ որ տեղի է ունեցել, օր. հնդկա-եւրոպական նախալեզուում, տարբեր լեզուների խառնուելու հետևանքը, կամ,

այդ al-մասնիկը սկսել է անհետանալ, նոյնը կատարուել է եւ այդ օտար բառերի անդէպ. ուր Alexander-ը փառու է eskander, իսկ laskar-ը—askar: Ռուսերէնում այդ «իմաստ» ուրումը՝ կոչում են народная этимология, գերմ. Volksetymologie.

ուղիղն ասած, տարբեր լեզու ունեցող ազգերի խառնուելու հետևանքը, այլևայլ ժամանակներում, ինչ որ տեղի է ունեցել, օր-«հայոց» լեզուի վերաբերեալ (՝ հնդկա-եւրոպական լեզուի մի կազմուած ձևը եկտր «հայ»երի միջնորդութեամբ ներկայակցուել է, «կոնպրոմիսս» է կազմել բոլորովին հակառակ որոշ լեզուային սխտեմաների հետ, որոնք յատուկ են եղել տեղացիներին, «աբուրիզեն»ներին¹⁾, և այլ նման արտալեզուային երևոյթները եթէ լեզուների ուսումնասիրութիւնը այլևայլ լեզուային երևոյթներ է երևան հանում և հետեապէս լեզուային նիւթ հայթայթում, — լեզուի գիտութիւնը՝ ինդուստրիական զրադուում է դոցա շաղկապումով, այդ «էմպիրիկ» գիտօղութիւնները փոխարինում է «սխտեմատիկ» գոկտրինայով:

Այդու հանդերձ, միշտ գիտակցութեան պէտք է առնուի այն հանգամանքը, որ բոլոր վերոյիշեալ «լեզուային» երևոյթները, ինչ պատճառներից էլ առաջացած լինին, միայն մի շաւղով են իսկապէս երևան գալիս լեզուի մէջ, — այդ մեր հոգեկանութեան միջնորդութիւնն է. եթէ այլևայլ «ապալեզուային» երևոյթներ հաւակ սկզբնապատճառ կարօղ են ծառայել այդ «լեզուային» երևոյթներին ծագման հանդէպ, այդ երևոյթները, սակայն, իրենց իսկական «մկրտումը» և ձևաւորումը ստանում են մեր հոգեկան բովը անցնելով, և այդ «լեզուային» երևոյթների այլազան պատկերները ընորոշում են թէ որակապէս և թէ քանակապէս ազգերի այսպէս ասած «լեզուային հոգեկանութեան» տարբեր ձևաւորումները ամփոփելով. (միակ այդ «լեզուային հոգեկանութիւնն» է, որ ստեղծում է ազգային լեզու, և դա է շաղկապօղը մի որ և է ազգի թէցեղի անհատներին): Այս ամենը յայտ է գալիս ի հարկէ գիտութեան տեսակէտից, եթէ ինդիքներին մօտենում ենք, այսպէս ասած, վերացական մտքով. և այդ տեսակէտից գոյութիւն ունեն ի հարկէ այդ լեզուային երևոյթների միայն գաղափարները, այն ինչ կեանքի մէջ, լեզուային միաւորների («լեզուների») հոգեկանութեան մէջ գոյութիւն ունի, գիտակցաբար թէ անգիտակցաբար, միայն իւրաքանչիւր լեզուային երևոյթի մասնաւոր ձևը. օրինակ.

1) Պր. Մաուր այդ տեղական լեզուն, ազգակից համարելով վրացերէնին, մինգրելերէնին, լազերէնին, սւաներէնին եւ այլ Կովկասեան լեզուներին եւ դորա հետ հին սուղական (էլամական) եւ այլ փորք-ազեան անհետացած լեզուներին, անուանում է դորա միտեղ «յարեթական» լեզուի ձեւեր. ուր «յարեթական» այդ անյայտ եւ միայն փոփոխուած ձեւերի մէջ պահպանուած նախալեզուի ազգակից է համարում ըստ այդ գիտնականի «սեմական» նախալեզուի հետ, ինչպէս մի երկւորեակներ: Դորա մասին թերեւս աւուր ունենամ մանրամասնօրէն հաղորդելու:

եթէ վերցնենք այն լեզուային երևոյթը, որը կոչւում է «ժողովրդական ստուգաբանութիւն», կտեսնենք, որ այդ մեր գաղափարացած երևոյթը միայն իրապէս գոյութիւն ունեցող «ժողովրդական ստուգաբանութիւնների» համադրականն է ներկայացնում մեր մտածօղութեան մէջ. սոսկ այնպէս, ինչպէս մեր մէջ գոյութիւն ունեցող «տուն», «չուն», «սեղան» ինչ գաղափարները իրօղութեան մէջ միայն անդրադարձած են տեսակներով, այսինքն կեանքում գոյութիւն ունեն միայն «տներ», «չներ» են. նոյնպէս «ժողովրդական ստուգաբանութիւն» — լեզուային գաղափարը գոյութիւն ունի իրեն իրական ձևերի մէջ, ինչպէս, օր., հնդկա-եւրոպական լեզուներում այս ինչ ձևով է երևան եկել. արարականում այս ինչ ելն: Ի հարկէ այդ և ուրիշ լեզուային գաղափար և սկզբունքներ մեր մէջ գոյութիւն ունեն յոկ վերացօրէն, իբրև մեր մտածօղութեան մի արգասիք. և իրենց ծնունդ և կազմուելը առաջացել են իսկականում գոյութիւն ունեցող «էմպիրիկ» երևոյթներից: Ուրեմն, եթէ մենք վերցնում ենք այլևայլ լեզուային երևոյթներ և քննութեան ենթարկում այս կամ այն լեզուային ուսման տեսակէտից, մենք այդ երևոյթները գիտում ենք իբրև գաղափարներ, աչքաթող անելով դրանց «էմպիրիկ» ձևերը, և միշտ պէտք է աչքի առաջ ունեցուի այն, որ «անալոգիա», «ժողովրդական ստուգաբանութեան», «չեչա», «մորֆոլոգիա» և այլոց փոխարէն մենք հանրալեզուային տեսութեան մէջ վերցնում ենք միայն դոցա «սխտեմատիկ» գաղափարները:

Մեր այս բոլորի ամփոփումն այն է, որ եթէ «լեզուաբանական գիտցիպլինաները» գործ ունեն մի շարք «լեզուային» ինդիքների հետ կամ թէ առաւելապէս «լեզուային» երևոյթների գաղափարների հետ, այդ դրա կատարում են վերացօրէն, առանձնացնելով այդ ամենը իրենց մայր՝ լեզուային միաւորների արտադրական ձևերից. (այդ «արտադրական ձևերը», ինչպէս ասուել է, ուսումնասիրում է «պատմական լեզուաբանութիւնը»), և մեր լեզուաբանական գիտցիպլինաները (՝ ներածութիւն լեզուաբանութեան, ընդհանուր լեզուաբանութիւն և պատմական լեզուաբանութիւն) իրենց պարունակելի նիւթի վերաբերեալ միշտ պայմանաւորուած են գոյութիւն ունեցող լեզուային միաւորների հոգեկանութեան¹⁾ որակումից, իբրև մայր-աղբիւրի: Լեզուաբանական ինդիքներ հետախուզօղին այս պէտք է բացայայտ և նախապիտեղի լինի:

Արդ տեսնում ենք, որ յիշեալ գիտական տեսութիւնները այն


1) Այդ լեզուային միաւորների (լեզուների) հոգեկանութիւնը՝ իսկապէս ասած, նոյնպէս «սխտեմատիկ» բնոյթ է կրում. եւ պէտք է հասկացուի իբրև համագործականը անհատական «լեզուային» հոգեկանութիւնների:

բանի շնորհիւ են առաջ եկել մեր հանուր գիտութեան աշխարհի մէջ, որ գոյութիւն ունեն ամեն մի «ազգային» (, «ցեղային») անհատների մէջ որոշ լեզուային սիստեմաներ, դոցա գոյանալու պայմաններ և օրէնքները, թէ անցեալում և թէ ներկայումս, նոյնպէս պէտք է վերապահուեն ընդհանուր լեզուաբանութեան ուսումնասիրման, և այդ տեսակէտից ոչ թէ միայն ի նկատի պէտք է առնուեն ողջ սիստեմաների գոյանալու հանգամանքները, ինչպէս արաբականի, անգղիականի, «հայկականի» («գրաբարի») և այլոց վերաբերեալ, այլ և ամեն մի «լեզուային» սիստեմայի, լինի դա մոկայոց, վանեցոց... բուլղարացոց, լեհացոց... ստեղծագործութիւնը, թէ «հայոց», պլաոնները ևն: Առհասարակ այդ բոլոր «լեզուային» սիստեմաները մարդկութեան հոգեկանութեան արտաքին արտացոլման որոշ ձևերն են: «Լեզուային» ենք անուանում, քանի որ այդ հոգեկանութեան արտայայտականը հանրապէս կատարում է «լեզուի» միջնորդութեամբ, իբրև գործարանի. և մինչև անգամ շատ ազգերի մէջ այդ «լեզու» գործարանի անունը փոխաբերաբար գործ է ածուում և այդ գործարանի միջնորդութեամբ արտայայտելիի հանդէպ: Մենք ևս ստիպուած ենք «լեզուային սիստեմա»ի տեղ գործ ածել նաև «լեզու» բառը, զիջելով զիւրութեան և ընդունուածին, քաջ գիտակցելով, օակայն, որ «լեզուային սիստեմա (որոշ անհատների մէջ)» հասկացողութիւնն անգամ գաղափարը չի հանդիսանում իրեն առարկայի բովանդակութեան, իբրև հոգեկանութեան մի արտայայտականի. և թէ մարդկութեան կենդանեական շրջանում բոլոր «հոգեկանութեան արտայայտականները», «լեզուային սիստեմաները», «լեզուները» ներկայացնում էին սոսկ մի արտայայտականի որակութիւնները, — յետագայ շրջաններում այդ նրբութիւնները իրենց ինքնուրոյն դարգացման¹⁾ շաւղով ընթացան և տեղիք տուին այլևայլ «differencial»ների, տարբեր բովանդակութիւն կրող արտայայտելիների: Մինչև անգամ այդ տարբեր «լեզուային սիստեմաները», որոնց գոյանալը մարդկութեանս կենդանեական կացութիւնից այս կողմը պէտք է անցնի, ստեղծում են յատուկ ուրոյն («ազգային, ցեղային...») հոգեկան «աշխարհներ», կամ «լեզուային մտածողութիւններ», ինչպէս գործ է ածում Բոդուէն դը Կուրտենէն. աւելի ևս — «լեզուային սիստեմաների» ազգեցութիւնը այնպիսի յատուկ «գունաւորումներ» է պատճառել «ցեղային»

1) Այնպիսի դէպքեր, ինչպէս լեզուների բռնի խառնակուելը, որը տեղի է ունեցել օր. հայերենի, անգղիերէնի վերաբերմամբ, «լեզուն» իրեն պատմական զարգացման ուղղութիւնից չեն հանում. բայց այլ գունաւորման են նպաստում. այսպիսի երեւոյթներ եւս լեզուի պատմական էւոլյուցիոնին զարկ տւող փաստեր են:

հոգեկանութեան («ցեղային» լեզուային մտածողութեան), որ, երբ արար երկխոսային հէնց իրեն ծննդեան առաջի օրերից կտրել են իր հարադատ ընտանիքից (Սլոփրում) և մեծացրել զուտ ֆրանսիական միջավայրում (Ֆրանսիայում), այդ «ֆրանսիացու» լեզուային մտածողութեան ձևերը էլի միանգամայն չէին յարում իսկական ֆրանսիացու լեզուային մտածողութեանը (ըստ Meillet-ի). այդ շատ բնորոշիչ պէտք է սեպել «լեզուային սիստեմայի» և իրեն յատուկ հոգեկանութեան փոխադարձ ազգեցութեանց համար: Սկզբում լեզուային սիստեմաները այնպիսի մտապատկերների յարակցման եղանակներն են հանդիսացել, որոնք արտաքին աշխարհում (մարդու հոգեկանութիւնից դուրս, արտաքս) կրել են «տարրական» բնոյթ, նման «տարրական» մտապատկերներ ծառայելիս են եղել օր. «շան», «ջրի», «կրակի»... «հաչալու», «հոսելու», «վառուելու»... «մեծութեան», «ջերմութեան»... և այլ բաների. և ֆիզիկական աշխարհի այդ ամենատարրական երևոյթները որոշակի անդրադարձել են ամեն մի լեզուային սիստեմայում: Հետևապէս այդ անդրադարձումը որոշ կատեգորիաների է ձևաւորուել. ինչպէս՝ արտաքին աշխարհի նիւթեղէնի և իրեն յատկութեան մտապատկերները վերարտադրուել են ամեն մի լեզուային սիստեմայում «անուն»ներով և «բայ»ներով: Եթէ վերցնենք այդ լեզուային սիստեմաների աւելի նորագոյն շրջանը, իրենց «զարգացման» կացութեան մէջ, կհանդիպենք նման սկզբունքների — անունների և բայերի փոխադարձ յարաբերութիւնը վերարտադրել «նորմումով», «խոնարհումով», — այդ «անուն» և «բայ»-երին վերաբերուել սեռերի տեսակէտից (մարդկանց և կանանց) ևն: Մենք նկատել ենք, օրինակ, որ մի քանի մտածողութեան կատեգորիաներ, որոնք «տարրական» չեն, բայց և իրար աւելի են յարում, միանման են վերարտադրուել հնդա-եւրոպականում, վրացերէնում-և սեմականում. յայտնի է որ հնդա-եւրոպական նախալեզուում ածականի և մակբայի համեմատական աստիճանները, յետոյ, գործող անունները (, Nomina agentis, ինչպիսի են մեր՝ ուտող, գիտակ, ուսուցիչ... , արուսաց՝ ТВОРИТЕЛЬ; ЛГУНЬ; ЗВОНАРЬ, ПАХАРЬ; ПЬТУХЪ, ПАСТУХЪ; ЗЪВАКА...), տեղի վերացական անունները (Abstracta loci, ինչպէս՝ աստանօր, անդանօր, լատիներէն՝ citra, ultra, extra...), թուական կարգի անունները (' առաջին, երկրորդ, երրորդ և այն) վերարտադրուել են հնդ.-եւր. -er- կամ աւելի յաճախ -ter- վերջածանցի միացումով՝ «աուզմենտացիայով» (ն. Բրուզմանն, Grundriss, § 521, 522, 523). սեմականում և վրացերէնում մտքի նոյն ստորոգութիւնները երևան են եկել նախածանց m-ի օժանդակութեամբ (սեմականում՝ mu-, ma-, վրացերէնում՝ mo-, me-, ma-, m-) ¹⁾: Կարիք չկայ յիշելու, որ այդ բոլոր լեզուային սիստեմաները

1) Թերեւս առիթ ունենամ մի այլ տեղում մանրամասնօրէն հարգելու այդ հետաքրքիր «հանրալեզուային» երեւոյթի մասին:



կարող են գոյութիւն ունենալ և չխօսող մարդու մէջ, օր. - համբերի, համբ-խուլերի. այժման «բաղաբակրթուած» մարդու մէջ այդ լեզուային սիստեման կարող է յայտ գալ արտաքին աշխարհին մինչև անգամ երկու եղանակներով, մէկը լեզուի՝ գործարանի, և միւսը գրի միջոցով:

Ամփոփելով այս ամենը տեսնում ենք, որ «լեզուային սիստեմաները», գոյութիւն ունելով որոշ անհատների հոգեկանութեան մէջ, ներկայացնում են իրենցից մեր մտապատկերների յարակցման ուրոյն եղանակները. իսկ մտապատկերների առարկաները սկզբում եղել են աւելի յարողը արտաքին աշխարհին, և յետոյ են առաջացել վերացական գաղափարներ:

Կասկած չկայ, որ Ֆիզիքական աշխարհի տարրական երևոյթների մտապատկերները (՝ ջրի, կերակուրի, հրացանի, կենդանիների, ձայնի...) յատուկ են նոյնպէս և կենդանիներին. սակայն դոցա յարակցումը, շաղկապումը կենդանիների հոգեկանութեան մէջ տարակուսելի պէտք է համարուի: Ապա մարդկութեան մէջ ինչպէս են առաջացել այդ մտապատկերների հասարակ և բարդ (նեքերին) յարակցման այլևայլ եղանակները, և մանաւանդ այդ ամենի հաղորդելը արտաքին աշխարհին արտասանողական գործարանների միջոցով: Կարող էք ասել, որ այդ գործարանների միջնորդութեան դիմելու «բնական» ձգտումը դեռ յատուկ է և կենդանիներին (՝ բռնաչելը, մկկալը, ծւծւալը, հաչալը...), որոնք աւելի ուղիղն իրենց զգացմունքներն են հաղորդում այդ կերպ. (մեծամասամբ կենդանիների այդ «արտասանողական» գործակատարութիւնները կատարում են այն տեղերում, որոնք գտնուում են բերանի խոռոչից դէպի խորքերը՝ կոկորդում, շնչափողում). և եթէ մարդկութեան արտասանողական հաղորդակցութեան մէջ աւելի մեծ դեր են խաղում բերանի, քթի և կոկորդի խոռոչները քան թէ կենդանիների մօտ, դա միայն մարդկութեան բնական զարգացման (հետեապէս և արտասանութեան եղանակի) արգասիքն ու հետևանքն է¹⁾:

Կարիք չկայ յիշելու ի հարկէ, որ մեր մտաց բովանդակութիւնը, իբրև արդիւնք մարդկային հոգեա-Ֆիզիկական կազմարանքի մի շարք պայմանների միահամուռ գործողութեանց, միայն որոշ բիոգենետիքական հիմունքների հիման վերայ կարող էր կապակցուել հնչիւնական շարժողութիւնների հետ, իրեն այդ կապակցելութեան

1) Իբրև շարունակութիւն այդ երեւոյթի նկատուում է որ հագագային հնչիւնները տեղիք են տալիս յետագայում աւելի առջեւի հնչիւններին, եւ շատ կոկորդա-հագագային հնչիւններ անհետանում են, ինչպէս վրացերէնում, սեմականում եւն:

հոգը պատրաստ ունենալով թերևս²⁾ դեռ կենդանեական շրջանում: Իսկ թէ ինչպէս է գոյացել մարդու խօսքը, թէ ինչպէս են առաջացել մեր հոգեկանութեան մէջ կապակցութիւններ հնչիւնական արտադրութիւնների և առարկաների գաղափարների միջև, — այդ դեռ անորոշ է և թերևս անյայտ էլ մնայ. կան միայն այլևայլ գիտական ենթադրութիւններ՝ հիպոտեզներ լեզուի այդ ծագման մասին: Թողնելով այն անհեթեթ և անբնական ենթադրութիւնները, որոնք արծարծուում էին առաջ, ինչպէս լեզուի ծագման լինելը գերմարդկային, ստեղծագործութիւն, գիւտ, Աստուծոյ շնորհատուր են, անցնենք այժման գիտական տեսութիւններին: Նախ լեզուի ծագումը փնտրում են այսպէս անուանեալ «բնածայնարարութեան» մէջ (onomatopoesie, звукоподражание), յետոյ, այդ ծագման հիմունքները գտնում են զգացմունքների անկամայական արտայայտութիւնների մէջ, չարակցելով շատ անգամ այդ երկու գործօնները ևս: Առաջին հիպոտեզայի գլխաւոր առարկութիւնը այն է, որ խօսքերը (resp. բառերը) սկզբում ունեցել են անխուսափելի կապակցութիւն իրենց իմաստի հետ, և որ, օրինակ, «բնածայնական» բառերը հնչելիս մեր մէջ նոյն պատկերն է գոյանում, ինչ որ և իսկական առարկան ըմբռնելիս. այսինքն մարդկային հնչիւնա-կոմպլեքսները, ինչպէս «կոկոալ», «ծւծւալ», «մոթմոթալ», «հոհոալ» կն մեզ տալիս են բնականօրէն նոյն պատկերացումը, ինչ որ և գորտի կոկոալը, ճնճղուկների ծւծւալը. մարդու կամ կենդանիների մոմթալը, հոհոալը կն, հետևապէս ստեղծուում է անմիջական կապակցութիւն մեր մտաց առարկաների և հնչիւնակոմպլեքսների միջև: Վունդտը հոգեբանական խոչընդոտ է գտնում աղտեղ և անմիջականութիւնը ժխտում է, առարկելով թէ անմիջական կապակցութիւն կարող է լինել միայն մեր բնածայնաւորք բառերի և դոցա ըմբռնման մէջ: Մեր կարծիքով, այս տեսութեան հանդէպ լուծման խնդիրը և էութիւնը անմիջականութեան թէ միջականութեան մէջ չէ, այլ գլխաւոր խոչընդոտը այն է՝ թէ ինչպէս են որակուել և այլազանուել (дифференцироваться) այլևայլ արտաքին հնչիւնա-աղմկային տպաւորութիւնները սկզբնական «արտասանութեան» մէջ, ինչպէս են այդ արտաքին երևոյթների գաղափարները վերարտադրուել որոշ հնչիւնակոմպլեքսների միջնորդութեամբ, որոնք նոյն գաղափարը և եթ պէտք է պատկերացնեն: Աչքի առաջ ունենալով,

2) Գիտնականներից մէկը (անունը չեմ յիշում), ուսումնասիրելով կապիկների հնչիւնա-աղմկային արտադրութիւնները, գտել էր, որ այդ հնչիւնա-աղմուկների ճաւաղները շատ ժամանակ կապակցուում են որոշ իմաստների հետ, ինչպէս «կապիկերէն» уек նշանակում է «փախիր, օբ-регис» ևն:


որ մինչև անգամ կենդանիները ըմբռնում և տարբերում են արտաքին հնչյունա-ազմկային երևոյթները, ինչպէս ծախ ծածուցը, գորտի կոկոսը, ջրի խաչոցը... Իսկ, օրինակ, չնեք մինչև անգամ տիրոջ կամ օտարի ձայնն էլ են տարբերում, աչքի առաջ ունենալով ուրեմն որ այդ բոլոր երևոյթների մտապատկերները ևս յատուկ պէտք է ինչէին նախամարդիկ-կենդանիներին,— և միևնոյն ժամանակ շատ և շատ կենդանիներին էին յատուկ առհասարակ նման երևոյթների մտապատկերներ և ընական ձայնա-աղմուկներ արտայտելը որոշ դործարանների միջնորդութեամբ, մենք դեռ անգիտակ պէտք է համարենք մեզ այն պայմաններին և նախնական պրոցեսներին, որոնք նպաստել և հող են պատրաստել, որ որոշ հնչյունակոմպլեքսներ յարմարեցրած և յատկանիշ չինեն որոշ մտապատկերների համար: Միևս կողմից լեզուի ծագումը որոնում են մարդու զգացմունքների անկամայական արտայայտութիւնների մէջ, իբրև հնչյունական շարժումների, յարակից մեր հոգեկանական որոշ կացութեանց. այդ թուին են պատկանում օր. վաչ, սով, սյ, ևյն միջարկութիւնները. բայց թէ ինչպէս է իմաստաւորում պատճառել և ոչ կամայական հնչյունակոմպլեքսներին—այդ ևս մնում է անյայտ Բաւականին ամփոփ տեսութիւն լեզուի ծագման մասին տալիս է միայն վունդտը, որը անուանում է իրեն այդ տեսութիւնը «գեներատիւական» (Entwicklungstheorie) և հիմնում է դարս մէջ մարդու այն շարժողութիւնների վերայ, որոնք յարակցում են այլևայլ «աֆֆեկտանների հետ. նախ որ շարժողութիւնների, «սիմպտոմների» յարուածութիւնը կապակցում է «աֆֆեկտանների ուժգնութեան հետ, յետոյ առաջանում են զգացմունքների որական արտայայտութիւնները, օրինակ, այն «միմիկ»ական շարժումները, մանաւանդ բերանի մկանքներիով, որոնք ուղեկցում են քաղցր, կծու և դառն տպաւորութիւններին, — նմանապէս յուզուելը (գոգիւր) և լքելը՝ ճնշուած գրութիւնը, լարուածութիւնը և գոցա լուծուելը արտայայտում են բերանի մկանքների լարուածութեան ձևերով վերջապէս երևան են գալիս և գիտակցութեամբ արտայայտութիւններ մարդու մտապատկերների, յոյց տալով առարկան կամ առարկայի և հետի կապակցուելիք պրոցեսների պատկերացումները տալով պանտոմիմիկական ժեստերի միջոցով: Միմիկական և պանտոմիմիքական շարժողութիւններին միանում են և «հնչյունական ժեստեր» (Lautgeberden), որոնք յետագայում առանձնանում են չնորհիւ իրենց գիբրմբանելիութեան և ձևափոփոխութիւնների կարելիութեան: Բայց և լեզուի զարգացման հետեւալ շրջանը մնում է դեռ նոյնպէս անյայտ իրեն մանրամասնութիւններում, և առհասարակ լեզուի ծագման խնդիրը տակաւին մնում է անորոշ և ոչ լուսարանուած գիտութիւնից: Հետևապէս և լեզուաին սիստեմաների՝ այդ մեր

478

մտապատկերների յարակցման ուրոյն եղանակների գոյանալը նոյնպէս մնում է ապագայի խնդիր. և լեզուաբանական դիսցիպլինաները հարկադրուած են վերցնել լեզուն, իբրև առարկայ միայն իրեն «պատմական» յայտնի շրջանում:

Ինչպէս տեսանք լեզուային սիստեմաների ուսումնասիրութեամբ այս կամ այն տեսակէտից պարապում են լեզուաբանական դիսցիպլինաներ, ինչպէս «ներածութիւն լեզուաբանութեան», «ընդհանուր լեզուաբանութիւն» և «պատմական լեզուաբանութիւն»: Բայց լեզուներով հետաքրքրում են և ոչ միայն այդ առարկաները, այդ «լինգուիստական» ուսումները, որոնց համար լեզուն ինքնուրոյն նշանակութիւն ունի և ուսումնասիրում է հէնց իրեն լեզուի համար: Լեզուն հետազոտութեան առարկայ է դառել և շատ ու շատ գիտութիւնների կողմից, և գլխաւորապէս հոգեբանութիւնից, տընտեսագիտութիւնից, պատմագիտութիւնից. և թէ լեզուն «ոգուոյ հայելին» է, ինչպէս իբրև ասում է Լեյբնիցը, այդ լեզուն հանրապէս ֆիլոլոգների համար շատ ժամանակ միակ օժանդակիչ աղբիւրն է ծառայում այս կամ այն գիտական խնդիրները պարզելու միլոլոգները, որոնց նպատակն է ուսումնասիրել մի որ և է ազգի կամ թէ ժողովուրդների քաղաքակրթութեան՝ կուլտուրայի արտայայտութիւնները, նայում են դէպի լեզուն միայն ինչպէս մի կուլտուրական ստեղծագործութեան վերայ. նմանապէս գրականութիւնը, համայնական կազմը (պետութիւն ևյն), անտեսական կեանքը և այլն հանդիսանում են մի որ և է ազգութեան հանուր կուլտուրայի բաղկացուցիչ տարբերը, մասերը: Լեզուն շատ ժամանակ իրեն մէջ պարունակում է այնպիսի նիւթեր, որոնք չեն կայրօղ մատակարարել օր. պատմական աղբիւրները, հնագիտութիւնը ևյն: Իսկ առհասարակ լեզուի նշանակութեան մասին աւելորդ է բան ասել, քանի որ դա ակնյայտ և գիտելի բոլորին. միայն այն է հարկաւոր ասել որ լեզուն, լինելով անհատի համար իբրև անգիտակցելի ասոցիացիաների բարդ սիստեմա, որը կայանում է խօսքի գործարանների և զգայութիւնների միջև և հնարաւորութիւն է տալիս խօսել և ուրիշներին հասկանալ, որ լեզուն, իբրև ասոցիացիաների սիստեմա, պատկանելով միայն անհատներին և նոյնութիւնը ոչ զքի մէջ չգանուելով, որ այդ լեզուն ունի վարակիչ և կաջօղ բնոյթ, և այդու չնորհիւ դառնում է ոչ միայն ֆիզիոլոգիական և հոգեբանական մի երևոյթ, այլ և սոցիալական. այդ ասոցիացիաների սիստեման, հնչյունային արտադրութեամբ, այնպիս ուժգնութեամբ է ներհաստատուում որոշ (ազգի թէ բարբառի պատկանօղ) անհատների մէջ, որը բացակայում է ուրիշ հասարակական երևոյթների յայտ գալու մէջ: 1)

1) Ն. Мейе, Введение... էջ 20 24.



որ մինչև անգամ կենդանիները ըմբռնում և տարբերում են արտաքին հնչիւնա-ազմկային երևոյթները, ինչպէս ծախ ծածուցը, գորտի կուլալը, ջրի խշշոցը... իսկ, օրինակ, չնեք մինչև անգամ տիրոջ կամ օտարի ձայնն էլ են տարբերում, աչքի առաջ ունենալով ուրեմն որ այդ բոլոր երևոյթների մտապատկերները ևս յատուկ պէտք է լինէին նախամարդիկ-կենդանիներին, — և միևնոյն ժամանակ շատ և շատ կենդանիներին էին յատուկ առհասարակ նման երևոյթների մտապատկերներ և ընտանի ձայնա-աղմուկներ արտայտելը որոշ գործարանների միջնորդութեամբ, մենք դեռ անգիտակ պէտք է համարենք մեզ այն պայմաններին և նախնական պրոցեսներին, որոնք նպաստել և հող են պատրաստել, որ որոշ հնչիւնակոմպլեքսներ յարմարեցրած և յատկանիշ լինեն որոշ մտապատկերների համար: Միև կողմից լեզուի ծագումը որոնում են մարդու զգացմունքների անկամայական արտայայտութիւնների մէջ, իբրև հնչիւնական շարժումների, յարակից մեր հոգեկանական որոշ կացութեանց. այդ թուին են պատկանում օր, վաչ, սկ, սյ, կշն միջարկութիւնները. բայց թէ ինչպէս է իմաստաւորում պատճառուել և ոչ կամայական հնչիւնակոմպլեքսներին — այդ ևս մնում է անյայտ: Բաւականին ամփոփ տեսութիւն լեզուի ծագման մասին տալիս է միայն Վուեդտը, որը անուանում է իրեն այդ տեսութիւնը «գենետիքական» (Entwicklungslehre) և հիմնուում է դարս մէջ մարդու այն շարժողութիւնների վերայ, որոնք յարակցում են այլևայլ «աֆֆեկտների հետ. նախ որ շարժողութիւնների, «ախտապտոմների» յարուածութիւնը կապակցում է «աֆֆեկտների ուժգնութեան հետ, յետոյ առաջանում են զգացմունքների որական արտայայտութիւնները, օրինակ, այն «միմիկ»ական շարժումները, մանաւանդ բերանի մկանքներով, որոնք ուղեկցում են քաղցր, կծու և դառն տպաւորութիւններին, — նմանապէս յուզուելը (գոգիւր) և լքելը՝ ճնշուած գրութիւնը, լարուածութիւնը և սոցա լուծուելը արտայայտում են բերանի մկանքների լարուածութեան ձևերով: վերջապէս երևան են դալիս և գիտակցորար արտայայտութիւններ մարդու մտապատկերների, յոյց տալով առարկան կամ առարկայի և հետի կապակցուելիք պրոցեսների պատկերացումները տալով պանտոմիմիքական ժեստերի միջոցով: Միմիքական և պանտոմիմիքական շարժողութիւններին միանում են և «հնչիւնական ժեստեր» (Lautgeberden), որոնք յետագայում առանձնանում են չորհիւ իրենց գիւրըմբռնելիութեան և ձևափոփոխութիւնների կարելիութեան: Բայց և լեզուի զարգացման հետեւալ շրջանը մնում է դեռ նոյնպէս անյայտ իրեն մանրամասնութիւններում, և առհասարակ լեզուի ծագման խնդիրը տակաւին մնում է անորոշ և ոչ լուծարանուած գիտութիւնից: Հետեւապէս և լեզուաին սիստեմաների այդ մեր

478

մտապատկերների յարակցման ուրոյն եղանակների գոյանալը նոյնպէս մնում է ապագայի խնդիր. և լեզուաբանական դիսցիպլինաները հարկադրուած են վերցնել լեզուն, իբրև առարկայ միայն իրեն «պատմական» յայտնի շրջանում:

Ինչպէս տեսանք լեզուային սիստեմաների ուսումնասիրութեամբ այս կամ այն տեսակէտից պարապում են լեզուաբանական դիսցիպլինաներ, ինչպէս «ներածութիւն լեզուաբանութեան», «ընդհանուր լեզուաբանութիւն» և «պատմական լեզուաբանութիւն»: Բայց լեզուներով հետաքրքրուում են և ոչ միայն այդ առարկաները, այդ «լինգուիստական» ուսումները, որոնց համար լեզուն ինքնուրոյն նշանակութիւն ունի և ուսումնասիրուում է հէնց իրեն լեզուի համար: Լեզուն հետազոտութեան առարկայ է դառել և շատ ու շատ գիտութիւնների կողմից, և գլխաւորապէս հոգեբանութիւնից, տընտեսագիտութիւնից, պատմագիտութիւնից. և թէ լեզուն «ոգուոյ հայելին» է, ինչպէս իրաւ ասում է Լեյբնիցը, այդ լեզուն հանրապէս ֆիլոլոգների համար շատ ժամանակ միակ օժանդակիչ աղբիւրն է ծառայում այս կամ այն գիտական խնդիրները: Կարգելու ֆիլոլոգները, որոնց նպատակն է ուսումնասիրել մի որ և է ազգի կամ թէ ժողովուրդների քաղաքակրթութեան՝ կուլտուրայի արտայայտութիւնները, նայում են զէպի լեզուն միայն ինչպէս մի կուլտուրական ստեղծագործութեան վերայ. նմանապէս գրականութիւնը, համայնական կազմը (պետութիւն և լին), տնտեսական կեանքը և այլն հանդիսանում են մի որ և է ազգութեան հանուր կուլտուրայի բաղկացուցիչ տարրերը, մասերը: Լեզուն շատ ժամանակ իրեն մէջ պարունակում է այնպիսի նիւթեր, որոնք չեն կարող մատակարարել օր. պատմական աղբիւրները, հնագիտութիւնը ելն: Իսկ առհասարակ լեզուի նշանակութեան մասին աւելորդ է բան ասել, քանի որ դա անյայտ և գիտելի բոլորին. միայն այն է հարկաւոր ասել որ լեզուն, լինելով անհատի համար իբրև անգիտակցելի ասոցիացիաների բարդ սիստեմա, որը կայանում է խօսքի գործարանների և զգայութիւնների միջև և հնարաւորութիւն է տալիս խօսել և ուրիշներին հասկանալ, որ լեզուն, իբրև ասոցիացիաների սիստեմա, պատկանելով միայն անհատներին և նոյնութիւնում ոչ զբի մէջ չգանուելով, որ այդ լեզուն ունի վարակիչ և կաշօղ բնոյթ, և այդու չնորհիւ դառնում է ոչ միայն ֆիզիոլոգիական և հոգեբանական մի երևոյթ, այլ և սոցիալական. այդ ասոցիացիաների սիստեման, հնչիւնային արտադրութեամբ, այնպիս ուժգնութեամբ է ներհաստատուում որոշ (ազգի թէ բարբառի պատկանող) անհատների մէջ, որը բացակայում է ուրիշ հասարակական երևոյթների յայտ գալու մէջ: 1)

1) Ն. Мейе, Введение... էջ 20 21.

